Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի հանձնաժողովի
1998 թ. օգոստոսի 31 -ի №40 որոշմամբ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ (ՎԵՐԱՆԱՅՄԱՆ)

Սույն կարգը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, սահմանում է էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի (հզորության), ջերմային էներգիայի ու բնական գազի վաճառքի, էլեկտրական էներգիայի հաղորդման, բաշխման, ջերմային էներգիայի հաղորդման, բաշխման, բնական գազի փոխադրման, բաշխման ծառայությունների սակագների սահմանման (վերանայման) ընթացակարգը և տարածվում այդ բնագավառում լիցենզավորվող գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց վրա՝ անկախ նրանց կազմակերպաիրավական տեսակից և սեփականության ձևից:

1.ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն կարգում օգտագործված որոշ հասկացություններ սահմանվում են հետևյալ կերպ՝

1.1 Հանձնաժողով – ՀՀ էներգետիկայի հանձնաժողով՝ էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին, որը գործում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրեն պատվիրակված լիազորությունների հիման վրա.

1.2 Էներգետիկայի բնագավառ – ՀՀ տարածքում էլեկտրական էներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման, ջերմային էներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման, բնական գազի փոխադրման և

բաշխման, ինչպես նաև էլեկտրական էներգիայի, բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ նրանց կազմակերպաիրավական տեսակից և սեփականության ձևից) տեխնիկական և կազմակերպաիրավական համակարգ.

1.3 Լիցենզիա - Հանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է Էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով որոշակի գործունեություն իրականացնելու իրավունք.

1.4 Լիցենզավորված անձ - Էներգետիկայի բնագավառում Լիցեզիայով սահմանված գործունեություն իրականացնելու իրավունք ստացած իրավաբանական անձ.

1.5 Հայտ – սակագների սահմանման (վերանայման) համար Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Սակագները կարող են սահմանվել (վերանայվել) Հանձնաժողով մուտքագրված Հայտի հիման վրա կամ Հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ:

2.2 Նախքան Հանձնաժողով Հայտ ներկայացնելը, Լիցենզավորված անձը պարտավոր է հանրապետական թերթերից որևիցե մեկում հրապարակել սակագների վերանայման վերաբերյալ իր հայտարարությունը (հավելված №2):

2.3 Սակագների սահմանման (վերանայման) բոլոր որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի նիստում՝ համաձայն սահմանված կարգի:

2.4 Սակագների վերանայման արդյունքում նոր սակագների սահմանման դեպքում Հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակումից 30 օր հետո:

2.5 Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների գործողության ժամկետը չի կարող 6 ամսից պակաս լինել:

2.6 Սակագների սահմանման (վերանայման) վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները և Հայտում ներառված փաստաթղթերը մատչելի են ցանկացած շահագրգիռ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ինչպես նաև հասարակության ներկայացուցիչներին ծանոթանալու համար, պայմանով, եթե դրանք չեն պարունակում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիք:

2.7 Լիցենզավորված անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

2.8 Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է վավերացված լինեն ձեռնարկության (ընկերության) պատասխանատու անձի (անձանց) ստորագրությամբ և կնիքով:

2.9 Լիցենզավորված անձի հաշվետվությունները (տեղեկատվությունը) և սակագնի հաշվարկները Հանձնաժողով պետք է ներկայացվեն նաև մագնիսական սկավառակով:

3. ՀԱՅՏԸ, ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

3.1 Հայտը ներառում է՝

ա) դիմում (հավելված №1)

բ) հանրապետական թերթերից որևէ մեկում սակագների վերանայման վերաբերյալ իր հայտարարության հրապարակումը հավաստող փաստաթուղթ

գ) լիցենզավորված գործունեության վերաբերյալ հաշվետվություններ և տեղեկատվություններ՝ 2 օրինակից (հավելվածներ №№ 3, 4, 5, 6)

դ) առաջարկվող սակագնի հաշվարկ՝ 2 օրինակից (հավելվածներ №№7,8, 9) և այդ հաշվարկի հիմքում դրված հետևյալ մեծությունների հիմնավորումները (հիմնավորող հաշվարկներ, վերջին փորձարկման սահմանված կարգով վավերացված արդյունքներ)՝ 2 օրինակից.

- Էլեկտրական (ջերմային) էներգիայի կամ բնական գազի ծախս՝ սեփական կարիքների համար և տեխնոլոգիական կորուստներ,
- Վառելիքի ջերմարարություն և տեսակարար ծախս (ներկայացնում են միայն էլեկտրական և (կամ) ջերմային էներգիա արտադրող (բացառությամբ հիդրոէլեկտրակայանների) ու բնական գազ տեղափոխող Լիցենզավորված անձինք),
- Ջեռուցվող տարածքների ծավալային գործակիցներ (ներկայացնում են միայն ջերմային էներգիա բաշխող (վաճառող) Լիցենզավորված անձինք),
- Տեղեկատվություն օդերևութաբանական ծառայությունից արտաքին օդի միջին ջերմաստիճանի մասին(ներկայացնում են միայն ջերմային էներգիա բաշխող (վաճառող) Լիցենզավորված անձինք):

3.2 Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

3.3 Հանձնաժողովը մուտքագրում է Հայտը և ստուգում ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն Կարգի 3.1 կետի պահանջներին:

3.4 Ստուգման դրական (բացասական) արդյունքի դեպքում, Հանձնաժողովի նախագահի հրամանով, Հայտն ընդունվում է (չի ընդունվում) ի վարույթ և

նշված հրամանի պատճեն, Հայտը մուտքագրելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ուղարկվում է Լիցենզավորված անձին:

3.5 Ի վարույթ ընդունված Հայտի վերաբերյալ Հանձնաժողովի համապատասխան որոշումը կայացվում է Հայտը մուտքագրելուց հետո 90 օրվա ընթացքում և Հանձնաժողովի որոշման պատճեն 5 օրվա ընթացքում ուղարկվում է Լիցենզավորված անձին: Սակագնի վերանայումը մերժելու դեպքում՝ Հանձնաժողովի որոշման մեջ շարադրվում են նաև մերժման պատճառները:

3.6 Ցանկացած շահագրգիռ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ինչպես նաև հասարակության ներկայացուցիչները կարող են մասնակցել Հանձնաժողովի նիստերին և քննարկումներին, գրավոր ներկայացնել սակագների վերանայման վերաբերյալ իրենց դիտողությունները և առաջարկությունները:

3.7 Հայտի մերժման վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը (նախագահի հրամանը) չի կարող ազդեցություն ունենալ հաջորդ Հայտերի ընդունման և քննարկման վրա:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

4.1 Հանձնաժողովը կարող է սեփական նախաձեռնությամբ վերանայել սակագները, երբ տեղի է ունեցել՝

- Լիցենզիայի պայմանների փոփոխություն
- իրավական դաշտի փոփոխություն
- սահմանված սակագներում հաշվի առնված պետական աջակցության ծավալների փոփոխություն
- Լիցենզավորված անձի գործող սակագների հաշվարկման հիմքում դրված ֆինանսատնտեսական ցուցանիշների էական փոփոխություն:

4.2 Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ սակագների վերանայման գործընթաց ձեռնարկելու դեպքում՝

ա) նախապես այդ մասին գրավոր տեղեկացնում է Լիցենզավորված անձին՝ նշելով վերանայման դրդապատճառները.

բ) հասարակությանը տեղյակ պահելու նպատակով, այդ մասին հանրապետական թերթերից որևիցէ մեկում տալիս է հայտարարություն՝ նշելով վերանայման դրդապատճառները:

գ) Լիցենզավորված անձից կարող է պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն:

4.3 Սակագների սահմանման (վերանայման) գործընթացը Հանձնաժողովի կողմից համարվում է սկսված՝ այդ մասին Լիցենզավորված անձին (անձանց) գրավոր տեղյակ պահելու օրից և իրականացվում է սույն կարգի 3.5 կետում նշված ժամկետում:

4.4 Լիցենզավորված անձն իրավունք ունի սակագնի սահմանման (վերանայման) համար սահմանված ժամանակահատվածում ներկայացնել համապատասխան առաջարկություններ, մասնակցել քննարկումներին և Հանձնաժողովի նիստերին:

5.ՎԵՃԵՐ

Սույն Կարգի կիրառմանն առնչվող վեճերը լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: